

տեղիին բաղդատել եւ հրաւիրել որ Հայն ալ Կրետեցիին պէս ընէ : Պէտք չէ ազգ մը մղել անկարելիին : Եղեռնական ընթացք մը պիտի ունեցած ըլլար քրանսական կառավարութիւնը, եթէ հետեւելով Տէռուլստներու կանչուրառութիւնը, պէս Աղջան-Լոռէնը ետ առնելու համար պատերազմի ելլէր : Մեր պատիկ Տէռուլստները կրնան խորհրդածել այս օրինակին վրա :

Մեր տառապանքը կայ, իրավա՞ն, եւ որ տարրալուծող թոյնն է օսմաննեան պետութիւն : Ռուսիա պիտի փախայ զայն նկատի առնել՝ իր գործը կատարելու համար : Մաղթենք որ Անգլիա համաձայնի Ռուսիոյ հետ, եւ Հայաստանի գործը լուծում գտնէ առանց բաղխումի, երկու կողման միահաղոյն հաւանութեամբ : Այդ պարագային մէջ, հայկական ինորոյն մէկ մասը թերեւս մնցի համար գորացոցի ելլը մը ունենայ : Խրմեան, որ Զարին արքունիքին մէջ մնե համակրութիւն քը վայելէ՝ կ'ըսնի, պարտաւոր է ըսել հրմա Զարին ինչ որ գրեց Նուպար փաշային : իրեն անէ զարմանել զնեցաւ : կնայ ընել այդ բանը, եւ պարտի ընկը ինչք բարձրագուն ներկայացուցիչն է հայ ազգին, եւ իր ճայնը պէտք է որ լսելի ըլլայ Բեդրապուրի վեհաժողովին մէջ, ըսելու համար թէ Եւրոպական խաղաղութիւնը չի կնար տեւական կերպով հաստատուիլ՝ ցորչափ հարստահարուած ազգութիւններուն տառապանքը չարձագութիւնը :

Գործունէութեան հակառակող մը չեմ : Ըսդհակառակն, Բայց կը խորհիմ որ լաւագն է չգործել քան դէմ գործել : իրաւունք չունինք ազգը ազատելու պարուակով զայն չնչիլ :

Մասնենք այն միջոցներուն որով կնանք մեր ազգին բարոյական գոյութիւնը պահպանել : Օդնենք այն բնազդական կորովի ջանքերուն որով մեր ժողովուրդը, հակառակ իր ծանր վերքերուն, կրած կորուստը զարմանել կը փութայ Նորանոր յիփորտանքներով չիփրասորենք օտարները, որոնցմէ կախուած է մեր ճակատագիր :

Այս գործունէութիւնը վատանգ չունի, ամեննէն կննականն է մնցի համար, ու միայ կարեին : Եւ ազգ մը չի կորսուիր, երբ դիտէ իր սրխանները ճանշաւ եւ ինքնինքը ուղղել :

ԱՐԺԱԿ ԶՈՂԱՆԵԱՆ

«ԱՆԱՀԻՒԾ» ԵՒ ՀԱՅ ԵՐԻՑԱՍԱՐԴՈՒԹԻՒՆՆԵՐ

(Եամակ՝ Խմբագրութեան)

Կը հրատարակենք հետեւեալ գեղեցիկ նամակը զոր Պ. Ս. Շահազիզեանց զրկած է Անահիտի խմբագրութեան, ի պատասխան աշխատակցութեան հրաւերին զոր ուղղած էինք իրեն Մեր ընթեցողաները հայացմամբ պիտի կարգան, մեզի պէս, այս ազնիւ տողերու, եւ միանգաման, մեզի հետ, ամենքն ալ պիտի բողոքն Պ. Շահազիզեանցի առարկութեան գէմ որով, հնա սերունդին պատկանիլլ մէջ բերելով, կը հետեւցնէ թէ երիտասարդ գրողներու խումբի մը մէջ այլ եւս ինքը տեղ մը չի կրնար գրաւել . մնաք կը հաւատանք որ կան հոգիներ որոնք չին ծերանար, որմնք ընդհակառակն իննալով աւելի կը գեղեցկանան : Եւ այդ հոգիներէն է «Եւսեմ վիլատ»ին ու «Հրապարակախօս ձայն» նի հեղինակը, որ, ամձնուէր ու բազմարդին կենանք մը յատոյ, հիմա իրաւունք ունի իր ազգին ուղղելու իր հանրածանօթ երգին սրբուն տաղերը :

. . . Անդաւան շնորհ սիրով
Ես սիրեցի ի հայեններ,
Գնա՞ն եւ գու նոյն շաւով :

ՄԵծարգոյ հայենակից :

Չեր նամակը ստացել եմ Անահիտ ազդի հետ միամին, որի համար յայսնում եմ ձեզ իմ խորին յորհակալութիւնը :

Անահիտ երեւան գալը այս ժամանակամիջուցին առանձին նշանակաւոր է մեր ազգային կենանքի վերաբերութեամբ : Այսօր, երբ Հայր վիրաւոր Սամարացու պէս ընկած է ճանապարհն եւ մինչեւ անվամ թագավասկ Ղետացին, մատից անցնելով, ուշ չի գրաբնաւմ նրա վիրայ : այսօր, երբ մեր ազգը ներկայացնելի է մի տես ունին եւ ամէն ուղ ներելի է համարում սեպահնենել այդ «անտէր ժամանակութիւնը» Անահիտ պէս մի հրապարակախօս թերան կարող է այն ազգի իրաւունքներին թարգման եւ գործակալ հանդիսանալ Եւրոպայի առջևն, որով եւ մնե ծառայութիւն ունի մաստուցանելու իւր հայրենակիցներին : (1)

(1) Պ. Շահազիզեանց «Անահիտ» ճանապարհները եւ տեսեր է զըստանձին աւելին : «Անահիտ» հայ հասարակութեան կ'ուղղուի մասն, քրանսերէն մաս պիտի չընենայ, ինուեւարը չի կրնար Հայոց պահանջները Եւրոպային ճանօնացնելու գործը կատա-

Կարգալով ձեր հանդէսի ծրագիրը, որ ձըգտումէ ամփոխ լընդանուուր տեսութիւն՝ վերաբերեալ զրավանական, պատմական, դաստիարակչական, գեղարտեսուական եւ քաղաքական խնդիրների, եւ մտածեցի, որ այդպիսի ծրագրի իրագործութիւնը, յայտնի բան է, այսպէս էլ հետ չէ, ինչպէս «Եղիշի լոյս, եւ եղեւ լոյսու Հարկաւոր կը լինի որոնել մասնագէսա ոյժեր, կազմակերպող քանքարներ, անխորտակելի եռանգ, պայծառ միտք, լայն հայեացք, որոնցով ազգի ցրուած բեկրնութիւնը կարելի կը լինի միացնել զիտութեան օզակութիւնը, Այդ պէս յատկաւութիւնները, որուք, անսարակոյս կը ցըտնէք մեր բանակների մէջ, աւելի ցըւուար կը լինի բանաստեղծական-զիտարկութեստական մասը յարաբերու. Մի որ, արուեստների ծաւալումը, որպէս գիտութիւնների ծավականասը, պահանջում է սեկրնէք սերունդ հոգեւոր եւ մտաւոր կրթութիւն, որ շատ պակաս է մեզ, որովհետեւ երեկ միայն ուաք ենք զրել կրթութեան շեմքի վերայ եւ այն «Պոյզն ինչ եւ գուն ուրեմք» . Երկրորդ որ, զարուս անսասական-չահամսզրական հոսանքը իւր կափտալիկով ու պրոլետարիզմով քաշել տարել է իւր հետ բոլորին, — մի հանգամանք, որից եւ առաջացել է իտէաների սպառումը մարդկութեան մէջ : Անկասած, իտէաների աշխարհը վերաստեցելու համար, պէտք է արմատական յեղափոխութիւն մտցնել սոցիալական կեանքի եւ մանուկ սերնդի զաստիարակող սիստեմի մէջ, որ, գժախտաբար, ներկայում մի անհարին բան է երեւում քաղաքակրթութեան աշքում : Ինչ եւ իցէ, ձեր հանդիսի զեղարտեստական մասը լուսանակութեամբ գերազանցում է հին սերընդին, որի ներքին մարդը ի բնէ արարող զօրութիւն է, բանաստեղծական է, զործնունակութեամբ գերազանցում է հին սերընդին : Ահա այս առիթով ես կամնում մի քանի խօսել :

Դուք ինձանից ինքորում էք, որ ես «իմ ներչնչուներով զեղեցկացնեմ» ձեր հանդէսը : Պատասխանում եմ : Ես իմ երեկոյացած օրերին ո՞րտեղից քաղել այցի ներջնչուները» Ես դիմեմ որ մանաւնզ այժմ պէտք է ոչ միայն

բեկ: Բայց եմք «Անահիտ» այլ զօրք կատարեն յատիգաւուած չէ, այն անձնը որ «Անահիտ» հիմնեցին, եւ որոնց արդին իրանց կը ըստ Պ. Չափականցի նշանակած ուղղութեամբ, անշուշտ անհատապէս պիտի շարունակն այդ գրօնճնակներն՝ Քաղաքացիանց մեջ անդամականացները» եւ դիմեմ որ մանաւնզ այժմ պէտք է ոչ միայն

հրեղէն տողերով, այլ եւ հրեղէն գործերով մաքակի իրական կեանքի խաւարի գէմ, բայց, աւաղ՝, այն ինչ որ ինձ պարգեւել էր բնութիւնը, թուում է որ կամաց կամաց ձեռիցս զնում է եւ նեռու չէ ժամանակը, երբ միանդամայն կը սնանկանամ: Բաց ի սրանից, հին սերունդի ուզեղը առնասարակ ճնշուել է իւր տեսան ալէկոնութիւններից, այնպէս որ շատ մարդիկ չէք գտնուել նրա մէջ, որոնք տակաւին պահնէլ են մտրութիւններին եւ կարող են աշակեցնել ձեր գեղեցիկ ձեռնարկութեան Այն ինչ ձեզ հարգաւոր են կենսագործութիւնները, զիտականի շատ պահանջութիւններին, եւ իմ կարծիքով, զիտաց պիտի որոնել այն սերնդի մէջ, որ մի յոկ ուկրով ընդունակ է հազարին զիմապաւել եւ շանթարձակ ճնշուուններով մեր զիակների մէջ էլ կենանի շոնչ չի ել : Այդ երիտասարդական հսասակն է որ իւր թաթազուն ու զեղան ճիւթերով անդան ուղարկութիւնը է հանդիսանում լուսաւոր ազգերի մէջ, եթէ ես Յանու Նաւի պէս կարողանայի հրամայել բնութեան, որ նրա օրէնքները շեղուին, որ երկնիք լուսաւորները տեղից չշարժուին, ապա կը ցանկանայի, որ երիտասարդական հսասակն էլ կանգ առնէ, այլ եւս առաջ չինայ, — մի հասակ որ ինքնարոյս գոհարի նման զիտի ցոլացնել իւր մէջ այլ որ անփոփոխ ազնիւ է, անպայմանապէս գեղեցիկ : Այս, այսպէս եմ ճանաչում առնասարակ երիտասարդութիւնը, որի մէջ անլամելի պիտի նաչէ սիրոյ և աշխատութեան երգը, որի սրտում աստուածելին կրապը, վառ եւ բրորոք լինելով, պիտի ոգենորդ նրան պիտական մուսերով հասարակաց բռոք տանելու : Բայց ես չեմ ուզում կեղծաւորել երիտասարդութեան, չեմ ուզում այնպէս սովորուել նրան, որ իւր թէ նա բնաւ պակասութիւն չունի : Նրա մի մասը մեր խաւարային կարգերի շնորհիւ ինքն էլ խաւարուած է անարժան գործերով . նա անսես անելով զրականական ծանրակիւ պահանջները եւ խաէլական գտումներին զաւանանելով, անձնատուր է լինում սորիկամութեան, հանապազ կամակատար է հանգիսանում խանընթերին ու խաներին, միայն թէ կարողանայ նաչել այնտեղ ուր նա վարուցած չի արել, քրտմնք չի թափէլ : Այդ տեսակի երիտասարդների գործունեկութիւնը այսպէս լինելով, նոքա ամենեւին չեն կամնում լսել ընդանուորի բարորութեան մասն եւ, այդ պատճառով, պատրաստ են այն բարօրութիւնը մի բաժակ գննիով ծախել, որով եւ անզագար

Ղատում են իրենց ոյժերը կափէշանտաների մթնոլորտում : Բայց այս վաս սովորութիւնը նոքա փոխ են առնում հասարակութեան յայտնի շրջաններից , որոնք ոչ մի հասկացողութիւն չունին մանկավարժութեան մասին , բաւական են համարում միայն իրենց մարմինը պարարտացնել եւ այդպէս բարի օրինակ լինել զիւրաթեք երիտասարդներին : Ինչ եւ իցէ , առքա , անտարակոյս , երիտասարդութեան բիծերն են , բայց արեգակն էլ բիծեր ունի . ո՞վ կարող է ասել որ արեգակը աշխարհի կենաստուն չէ : —

Ահա այսպէս՝ թելազրուած նոր սերնդի վերը յիշած յատկութիւններից , ես կամեցայ որ դուք , որպէս հոգեբանական կենաքին աւելի հմուտ մի մարդ , առանձնու ուշ զարձնէք այդ սերնդի վերայ , քաջալերէք դրան գէպի գեղարտուետական ասպարհէ՝ Անանիի միջնոցով :

Ուրբան էլ հիսոթափութեան մշուչներով պաշարուած լինէր մեր սիրու ներկայումս , այնու ամենայնու մննք հաւատում ենք , որ մեր ազգի վիճակը ապագայում կը լինի աւելի միջիթարական : Անցածում ու ներկայում , արդարեւ , մննք միայն անենում ենք դառն փորձեր ու ձախորդութիւններ , բայց մննք չենք կրոցնում մեր յոյը , որ ապագան կը տայ մեզ պայծախտայներ , ապացանութեան խարիսխ , քաղաքակրթութեան հաստատ հիմք :

Առ ի սրտէ ցանկանում եմ ոսկէծդի Անսահտին , — այդ հեթանոս Հայերի զգաստութեան մօրը , որ մեզ էլ բոլորի զգաստացնէ աղդային զաղափարներով՝ առանց կրօնի խարութեան : Արդարեւ , ժամանակ է մեզ քաղաքականապէս առողջանալ , ժամանակ է բոլոր Հայերին՝ եւ Լուսաւորչականին , եւ Հայ-հոլովէմականին , եւ Աւետարանականն՝ ճաւելու մի նեղայրութեամբ մեր նուրբական ազգութիւնը պատսապարիւր , որ գժիրային հալածանքներ երես սահելով , այսօր կանգնած է զէմ յանդիման հերոպական քաղաքակրթութեան առաջեւ եւ իրաւունք է պահանջում նոյն քաղաքակրթութեան պատուզ վայելելու : Նայելով այդ երեք գառազգիների յայտնի եւ թագուցեալ երկաստակութիւնների վերայ , ես կամմի ասել նրանց այն ինչ որ Մովսէս մարգարէն ասաց գերի Հրէսներին Եղիպատում , երբ նոցանից մէկը ծնեմում էր միւսին՝ «Ընդէջը հարկանես զընկերդ» , եւ կամ նոր Կոտակարանից ասեմ : «Արք եղբարք էք , ընդէջը գրկէք զմիւնան» : —

Մովսէս
10 նոյ. 1898

Ս. ՇԱՀԱՄԱՐԴ ԶԵԼՅԱՆ

ԱՆՁՆԱԱՊԱՆ ՏԴԱՔՑՆԵՐ

Մութ անձկութիւն մը կոկորդս կը սեղմէ ամէն անգամ որ կ'իմանամ թէ տղայ մը անձնասպան եղած է : Մնողքներուն հրէշային վարժունքին մէջն , այց տանջուած հոգիները կ'երեւակայիմ , տիսեղծ ծաղիկներու պէս որ ինքնանին կը փեթառեն արեւին ու . ջուրին կարօտէն չանջուելու համար : Բայց այց ծայրայեղորէն գժբաղդ էակներէն աւելի իմ սիրաս շարժած են միշտ այն զգայնիկները որոնք հըպումի մը ներքեւ կը թոռմին : Անցեալները իմացայ որ պղտիկ աղջիկ մը ինքընքը կախած էր մօրթէն յանդիմանուելուն համար : Այդ չափազանց սուր զգայնութիւնը , յանդիմանուենա մը իսկ չտոկացող այդ զգազգոռութիւնը եթէ զին կը սարտացնէ , բնաւ չի զարացնէր սակայն : Անիկն ննիծ կը թուր սկիզբէն ի վեր տանջուած պղտիկներուն զեղուուր : այդ խեցն աղջիկը իր արհեան մէջ ունէր իր գժբաղդ քյուրերուն տենող , անսոնց սոկացաց սարսուները , որ զարերու մէջն իրեն հասած էին :

Այդ չուանը կիցիւ թէ տիսեղծ ցաւապին այդ զերուուն վերջինն սեղմած ըլլար :

Այս մարտիրոսուհին միտքս կը բերէ յուղիչ յիշատակ մը զգրոցի կենաքին : Այն ասեն թաղային վարժարան մը կ'երթայի , եւ իմ ընկերունիներուն մէջ պղտիկ աղջիկ մը կար ութը տարեկան , ճանչցուած ոչ միայն զգրոցի աշկերներէն այլ բոլոր թաղեցիներէն՝ իր անսատակ Հուարթու անունովը Վայրենի բնութեամբ , անզուսպ , անննազանդ աղջիկ մըն էր Անսվոր խանդ մը կարծես ամէն վայրիկեան անոր արիւնը կ'եռացնէր : անհանդարա եւ իրսիսա , գեռ կը միշեմ զինքը իր սեւ կրակի պէս աշքերով , զանգուր ու իր սիստ մազերով եւ հեգուզ շրթունքներով : Բնաւ չար չէր սակայն , կը բաւէր որ արգելու չըլլային ուզածը ընկերու , մտքէն անցածը գործազրելու : Քանի մը անգամ վզընատուած վարժարանէն , ծնողքը վերջին անգամ մըն ալ խոնդրած էին վարժուհին զայն ընդպանի , միշտ կրկնելով «միսը ձեզի , սկորը մեղի» : Ա՛լ անկէ ետքը զգրոցի պաշտօնեաներուն համար գործ մը սկսաւ զասարաներուն մէծ ձանձրութիւն մոռնայու կամ իրենց թմրած հոգին ցնցելու համար , եւ ամենքն ալ սիսերիմ այց պղտիկ աղջիկան , միայն միայն անոր սսկորը գարձնելու ծնողքին : Այն օր կը ծնեմէին զինքը մետաղէ եղերքնե-